



## ԱԳԵՎԱԶԻՆ ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ԳԻԾԵՐԸ

Գծաւոր վերարկուն քիչ մը աչքառու է այս անասունին համար, որ միշտ բզբտուելու վտանգին ենթակայ է: Հետեւաբար ինչո՞ւ ագեվազը այսպէս գծաւոր է:

Երբ հեռուէն դիտեսք՝ բոլոր ագեվազները իրարու կը նմանին... Սակայն իւրաքանչիւր անասունի պոչէն մինչեւ գլխուն գիծերը կը տարբերին միւսներէն: Ասիկա կ'օգնէ իր ընտանիքը ճանչնալու մօտէն, թէ հեռուէն: Այս ձեւով արուն միշտ իր աչքին տակ կ'ունենայ էգերը, իսկ գաղթի ժամանակ մայրերը կրնան դիւրութեամբ գտնել իրենց ձագերը: Սակայն ագեվազները իրենց հոտառութիւնն ալ կը գործածեն՝ զիրար ճանչնալու համար:

Վտանգաւոր ցիցի ճանճերը կ'ատեն գծաւորումը: Այդ ճանճերը կը փոխանցեն քունի հիւանդութիւնը: Անոնք իրենց մեծ աչքերով լաւ չեն կրնար ձեւերը զանազանել: Անոնք միայն ագեվազին գծաւորումը կը տեսնեն եւ կը նախընտրեն երթալ ու խայթել միագոյն կենդանի մը, ինչպէս՝ եղնիկ մը կամ գոմէշ մը: Այս պարագային ագեվազը իր գծաւորումին շնորհիւ փրկուած կ'ըլլայ:

### ԳԻՏԵԻՐ, ԹԷ...

\* Իւրաքանչիւր ագեվազ տարբեր գծաւորում մը ունի իր գլխուն վրայ: Ասիկա ձեւով մը անոր անձնաթուղթն է:



\* Ըստ տեսակներուն, ագեվազները տարբեր գծաւորումներ ունին: Կրանթի ագեվազը ունի բաւական հաստ 25-30 գիծեր, մինչ Կրելիի ագեվազին գիծերը 80 հատ են եւ շատ բարակ:

\* Իր մօր փորին մէջ ագեվազին ձագը սեւ կ'ըլլայ: Ապա մանր ճերմակ գիծեր կը յայտնուին եւ կը մեծնան: Ծնունդի վայրկեանէն սկսեալ ագեվազին ձագը կ'ունենայ իր վերջնական գծաւորումը:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՏԵՆԻ-ՇԱՀԻՆԻՆԻ  
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵՆ






Անասունները ո՞ր կը բնակին:



Իւրաքանչիւր պատկերէն քանի՞ հատ կը տեսնես: Թու՛ւ եւ արձանագրէ՛:



Կրնա՞ս լուծել:

$7 - 3 = \square$

$\square + 2 = \square$

$\square + 5 = \square$

$\square - 4 = \square$

$\square + 1 = \square$

$6 + \square = \square$

$\square - 2 = \square$

$\square + 4 = \square$

$\square - 2 = \square$

$\square = \square$

$\square + 3 = \square$

$\square - 3 = \square$

$\square - 2 = \square$

$\square + 4 = \square$

$2 + \square = \square$

$\square + \square = \square$

$\square - 3 = \square$

$\square - 5 = \square$

$\square = \square$


$\square - \square = \square$

$\square = \square$

$3 + \square = 5$

$\square + 4 = \square$

$\square = \square$



Գունաւորէ՛ հետեւեալ պատկերը նախասիրած գոյներովդ:



# ԻՇԽԱՆՈՒՅԻՆ ՈՒ ՎԻՇԱՊԸ

Կինը ծանօթ էր կախարդութեան արուեստին, հետեւաբար խրախուսեց զանոնք խոստանալով.- Այսօր իսկ կը դրկեմ տղաս, որ ամէն ինչ եւ ամէն բան կրնայ տեսնել եւ իմանալ:

Իշխանուհին հայրն ու մայրը լսելով բարի կնկան խոստումը, շատ ուրախացան եւ զայն պարզեատրեցին գեղեցիկ նուէրով մը: Երբ զարմանալի կարողութեամբ տղան, որ կրնար ամէն ինչ տեսնել ու իմանալ ներկայացաւ իշխանին, իշխանը հարցուց.

- Այն տղան, որ ամէն ինչ կրնայ տեսնել եւ ամէն բան կարող է իմանալ դո՞ւն ես...

- Այո՛, ե՛ս եմ, Տէր իմ իշխան,- պատասխանեց տղան ինքնավստահ կերպով, ապա շարունակեց,- Ի՞նչ կ'ուզեք իմանալ...

Իշխանը պատասխանեց.

- Շատ գեղեցիկ աղջիկ մը ունեի, որ առեւանգուեցաւ նենգ ու չար ոգիի մը կողմէ. կրնա՞ս տեսնել եւ գուշակել, թէ ո՞ր է ան հիմա, եւ ի՞նչ կ'ընե՞ս...

Տղան պահ մը ակնարկը կեդրոնացուց հորիզոնին վրայ, ապա ըսաւ.

- Ա՛հ, ձեր դուստրը առեւանգողը նենգ վիշապ մըն է, որ իշխանուհին բանտարկած է մութ քարայրի մը մէջ. այդ քարայրը կը գտնուի բարձր լեռներուն կեդրոնը, եւ վիշապը, ամէն օր, իշխանուհին կ'օղակէ իր տասներկու պոչերով, որպէսզի իշխանուհին փախչելու որեւէ փորձ չկատարէ: Այսպիսով, իշխանուհին պարտաւորուած կ'ըլլայ նաեւ շոյելու վիշապին տասներկու գլուխները, որպէսզի ան հանգիստ ու երջանիկ քնանայ...

- Չե՞ս կրնար ազատել զայն, ո՞վ բարի մանչ,- հարցուց ազնիւ հայրը աղաչական եղանակով:

- Այո՛, Տէր իմ, կրնամ կատարել ձեր հրամանը,- պատասխանեց տղան:

Ապա աւելցուց շատ ինքնավստահ կերպով.

- Պիտի երթամ, անպայման, ազատելու համար իշխանուհին՝ միջնեկ եղբօրս օգնութեամբ. միջնեկ եղբայրս կրնայ ակնթարթի մը մէջ բարձր պարիսպ պատել. այնպիսի պարիսպ, որմէ ներս ոչ մէկ արարած եւ ոչ ալ չար ոգիներ կրնան

թափանցել: Զետս պիտի տանիմ նաեւ կրտսեր եղբայրս, որ վարպետ որսորդ մըն է, եւ հարիւր մղոն հեռաւորութեան վրայ գտնուող ամէնէն փոքր նշանն իսկ չի վրիպեցներ իր նետէն:

Թագաւորը շատ ուրախացաւ եւ մեծապէս յուսադրուեցաւ: Ան խոստացաւ այս քաջ տղուն եւ անոր եղբայրներուն ամենաթանկագին նուէրները տալ, եթէ յաջողէին ազատել սիրուն իշխանուհին:

Ամէն ինչ տեսնող ու ամէն բան իմացող տղան առաջնորդեց իր եղբայրները դէպի քարայրը:

Անլաւ կը տեսնէր իշխանուհին, որ զբաղած էր վիշապին տասներկու գլուխները շոյելով: Վիշապը իր տասներկու պոչերով կապանքած էր

զայն, որպէսզի իր քնացած միջոցին փախուստի չկարենար դիմել...

Երբ տղան քարայրէն ներս մտաւ, իշխանուհին շփոթած, եւ եկուորին կեանքին գալիք վտանգէն սարսափած, մեղմ ձայնով շնջաց.

- Ինչպէ՞ս կրցար հասնիլ հոս. խնդրեմ, փախի՛ր, փախի՛ր վիշապը չարթնցած, որովհետեւ եթէ արթնայ ու քեզ տեսնէ, կը սպանէ քե՛զ ալ, զի՛ս ալ...

Տղան մատով թելադրեց իշխանուհին, որ լուռ կենայ ու շարունակէ շոյել վիշապին գլուխները:

Վիշապը սկսաւ խլրտալ: Տղան



ստուգելէ ետք վիշապին խոր քուն մտած ըլլալը, սկսաւ պոչերը մէկիկ-մէկիկ հեռացնել իշխանուհին:

Վիշապը շարժեցաւ եւ յօրանջելով հարցուց.

- Ո՞վ կայ հոս, սկսայ մարդու հոտ առնե՛լ:

Իշխանուհին պատասխանեց.

- Մարդ ուրկէ՞ հոս պիտի գայ, ո՞վ կրնայ համարձակիլ: Երագիդ արդիւնքն է խօսքդ, հանգիստ ըրէ՛ ու շարունակէ՛ քնանալ: Ո՞վ կրնայ հոս հասնիլ:

Վիշապը կրկին խոր քուն մտաւ:

Տղան, վիշապին բոլոր պոչերը իշխանուհին հեռացնելէն ետք, բռնեց անոր ձեռքը ու միասին կայծակի արագութեամբ քարայրէն դուրս վազեցին:

Իշխանուհին եւ երեք եղբայրները սկսան փախչիլ:

Վիշապին քունը երկար չտուեց: Արթնցաւ, ու երբ նշմարեց աղջկան բացակայութիւնը, սաստիկ բարկացած քարայրէն դուրս նետուեցաւ, ու սկսաւ արագօրէն հալածել փախստականները:

Իշխանուհին նկատեց վիշապը, եւ աղերսագին խնդրեց երեք եղբայրներէն, որ զինք ջանձնեն վիշապին:

Մեծ եղբայրը ըսաւ միջնեկ եղբօր.

- Սկսէ՛ մեր ու վիշապին միջեւ պարիսպը կառուցել, վիշապին ձեռքը իշխանուհին չհասած:

Յրամանը արագօրէն կատարուեցաւ, որով վիշապը ինքզինք գտաւ կատարեալ անկարելիութեան մը առջեւ: Ան չէր կրնար պարիսպէն անցնիլ, բռնելու համար իշխանուհին:

Ազատած էր իշխանուհին: Իսկ վիշապը, պարիսպին ետեւէն, իր ամբողջ ուժով պոռաց.

- Վերադարձուցէ՛ք կինս. ետ տուէ՛ք զայն, որովհետեւ ան ձեզի չի՛ պատկանիր: Մինչ իշխանուհին կը պոռար.


- Ո՛չ, մտիկ մի՛ ընէք իրեն, մի՛ յանձնէք զիս. ես չեմ ուզեր վերադառնալ: Ես ծնողքս կ'ուզեմ, զիս տարէ՛ք տունս, զիս տարէ՛ք մարդոց մօտ:

(Շարունակելի)

## ՅՕՂԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԿԱԶՄՈՒԻ

Մայրամուտեն ետք առարկաները, բոյսերն ու գետինը տաքնալէ կը դադրին՝ արեւուն ճառագայթներուն բացակայութեան պատճառով:

Օդը ջրաշոգի կը պարունակէ: Երբ այս ջրաշոգին կը շփուի պաղ պաղ մակերեսներուն հետ, մանր կաթիլներու կը վերածուի: Այդ պատճառով ալ առաւօտուն ծաղիկներուն փերթերը փոքրիկ ցօղի մարգարիտներով զարդարուած կ'ըլլան:



## ԻՆՉՈՒՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀՄԱՅԷ ՕՁԵՐԸ

Երաժշտութիւնը ոչ մէկ ազդեցութիւն ունի օձերուն վրայ, որովհետեւ անոնք ամբողջովին խուլ են: Օձերուն ուշադրութիւնը գրաւողը սրինգին շարժումներն են: Երբ սողունը իր կողովէն կ'ելլէ, ան իր առջեւ կը տեսնէ օրօրուող գործիքը: Այդ գործիքը ուրիշ օձի մը կը նմանցնէ եւ անմիջապէս զայն կը կապկէ:

